

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

---

« 06 » ապրիլ 2023թ. No 1773 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման 01/1032-23 առ 03.04.2023թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 4 դեղը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝
  - 1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:
3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Բաղդյանին՝
  - 1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի

Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ՝

Լ.ՆԱՆՈՒՇՅԱՆ



Recoverable Signature

X *L. Babakhanyan*

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	Երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	Երկիր	Բաց թողնման կարգավիճակը	Եզրակացության համար (ԵԱՏՄ հայտի համար) և ամսաթիվ
1	Պրեստանս	ամլոդիպին (ամլոդիպին բեզիլատ), պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին)	դեղահատեր	5մգ+5մգ; (29) պլաստիկ տարայում, (30) պլաստիկ տարայում, (90/3x30) պլաստիկ տարայում	ՍԵՐՎԻԵ ՌՈՒՍ ՍՊԸ, 108828, թաղ.158, շ 2, շ 1,բն. տ. Կրասնոպախորսկոյե, Մոսկվա	Ռուսաստան	Լես Լաբորատորիես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս	Ֆրանսիա	Դ	21262 (000575) 31.03.2023
2	Պրեստանս	պերինդոամլոդիպին (ամլոդիպին բեզիլատ), պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին)	դեղահատեր	5մգ+10մգ; (29) պլաստիկ տարայում, (30) պլաստիկ տարայում, (90/3x30) պլաստիկ տարայում	ՍԵՐՎԻԵ ՌՈՒՍ ՍՊԸ, 108828, թաղ.158, շ 2, շ 1,բն. տ. Կրասնոպախորսկոյե, Մոսկվա	Ռուսաստան	Լես Լաբորատորիես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս	Ֆրանսիա	Դ	21263 (000575) 31.03.2023
3	Պրեստանս	ամլոդիպին (ամլոդիպին բեզիլատ), պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին)	դեղահատեր	10մգ+5մգ; (29) պլաստիկ տարայում, (30) պլաստիկ տարայում, (90/3x30) պլաստիկ տարայում	ՍԵՐՎԻԵ ՌՈՒՍ ՍՊԸ, 108828, թաղ.158, շ 2, շ 1,բն. տ. Կրասնոպախորսկոյե, Մոսկվա	Ռուսաստան	Լես Լաբորատորիես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս	Ֆրանսիա	Դ	21264 (000575) 31.03.2023
4	Պրեստանս	ամլոդիպին (ամլոդիպին բեզիլատ), պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին)	դեղահատեր	10մգ+10մգ; (29) պլաստիկ տարայում, (30) պլաստիկ տարայում, (90/3x30) պլաստիկ տարայում	ՍԵՐՎԻԵ ՌՈՒՍ ՍՊԸ, 108828, թաղ.158, շ 2, շ 1,բն. տ. Կրասնոպախորսկոյե, Մոսկվա	Ռուսաստան	Լես Լաբորատորիես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս	Ֆրանսիա	Դ	21265 (000575) 31.03.2023